



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

----- 2018 թվականի N°---Ա  
ք.Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N°148Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի դեկտեմբերի 29-ին հայտ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 1 տարի 10 ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 27-ի N°148Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Եղեգնուտ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության N°0543 լիցենզիայով (այսուհետ՝ N°0543 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը.

բ) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի նոյեմբերի 20-ին N°ԵՄԴ/0125/04/17 քաղաքացիական գործով կայացված վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ.

գ) «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը 2018 թվականի հունվարի 23-ի N°179/06/5 գրությամբ հայտնել է, որ պարտավորվում է Հանձնաժողովի կողմից Ընկերության N°0543 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո 2016 թվականի ապրիլի 19-ի N°860/10/5 գրությամբ ներկայացված N°16-0008 երաշխիքի համաձայն երաշխավորված ինը միլիոն հարյուր տասը հազար դրամ գումարից չորս միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար դրամը առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, ինչպես նաև Հանձնաժողով է ներկայացրել երկարաձգվող կառուցման ժամանակահատվածում N°0543 լիցենզիայի

պայմանների պատշաճ կատարման ապահովման նպատակով №18-0011 նոր բանկային երաշխիք՝ մինչև 2020 թվականի հունվարի 15-ը գործողության ժամկետով.

դ) ի պատասխան Հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 17-ի գրության՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչը 2018 թվականի հունվարի 24-ի գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը պատրաստվում է ներկայացնել ֆինանսական առողջացման ծրագիր և նախատեսում է ավարտին հասցնել «Եղեգնուտ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցումը.

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածների 1-ին մասերը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 27-ի «ՎՏՎ ԷՆԵՐՁԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Եղեգնուտ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №148Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված №0543 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2018 թվականի փետրվարի 1-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը» բառերով:

2. Ընկերությանը՝

1) №0543 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Եղեգնուտ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ապրիլի 19-ի №860/10/5 գրությամբ ներկայացված №16-0008 երաշխիքի համաձայն երաշխավորված ինը միլիոն հարյուր տասը հազար դրամ գումարից չորս միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի փետրվարի 1-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք.Երևան  
-- հունվարի 2018թ.